***Հավելված N 12***

БЅ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
/ԱՆՁՆԱԳԻՐ/

Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում

(Բյուջետային ծրագրի անվանումը)

1. ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

| 1.1 ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ |
| --- |
| Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում |

| 1.2 ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ՝ |
| --- |
| 1061 |

| 1.3 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ (ԲԳԿ)՝ |
| --- |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն |

| 1.4 ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ՝ |
| --- |
| 1991թ. |

| 1.5 ԾՐԱԳՐԻ  ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՎԱՐՏԸ՝ |
| --- |
| շարունակական |

| 1.6 ԾՐԱԳՐԻ ՆԱԽՈՐԴ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ՝ |
| --- |
| Արտաքին հարաբերությունների ոլորտում պետական քաղաքականության մշակում և ծառայությունների մատուցում, հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ |

## 2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| 2.1 ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ՝ |
| --- |
| Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և պետական շահերի պաշտպանություն |

**2.2 ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔԵՐԸ՝**

| Ծրագրի իրավական հիմքերը | Նկարագրությունը |
| --- | --- |
| ՀՀ Սահմանադրություն | Հոդված 13. Արտաքին քաղաքականությունը<br><br>Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով: |
| ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին | «Արտաքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային |

| | |
|---|---|
| վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ | հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների ներկայացման, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացման, համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացման, համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացման, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովման, պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը»: |
| ՀՀ օրենքը «Դիվանագիտական ծառայության մասին» | Հոդված 4. Դիվանագիտական ծառայության խնդիրները<br><br>1. Դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացնելը, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և |

| | |
|---|---|
| | իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը: |
| ՀՀ ԱԳՆ կանոնադրություն | 9. Նախարարության նպատակներն են՝<br>1) միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատումը.<br>2) Հայաստանի Հանրապետության կառավարության արտաքին քաղաքականության մշակումը և իրականացումը.<br>3) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության կազմակերպումը և ղեկավարումը:<br>10. Նախարարության խնդիրներն են՝<br>1) միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների ներկայացումը.<br>2) օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական և (կամ) հյուպատոսական հարաբերությունների իրականացումը.<br>3) համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա արտաքին քաղաքականության մշակմանն ու իրականացմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը.<br>4) համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացումը.<br>5) Հայաստան-սփյուռք փոխգործակցության ամրապնդմանը և զարգացմանը աջակցումը.<br>6) Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովմանը, դրա ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության իրականացմանն աջակցումը. |

| | |
|---|---|
| | 7) Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների ապահովումը.<br><br>8) պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը:<br><br>9) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը. |
| ՀՀ Կառավարության գործունեության 2021-2026թթ. ծրագիր /հաստատված ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշմամբ/ | 1.1 ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ<br>Կառավարության արտաքին քաղաքականության ուղենիշներն են Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությունը, Արցախի ժողովրդի իրավունքների և անվտանգության ապահովումը, տարածաշրջանային խաղաղության հաստատումը, տարածաշրջանի ապաշրջափակումը և կայունությունը: Արտաքին և անվտանգային քաղաքականության առաջնահերթություններից է Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և համապարփակ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո՝ հայտնի սկզբունքների և տարրերի հիման վրա, Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումը, ինչպես նաև մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը և հումանիտար խնդիրների լուծումը: Հայաստանի Հանրապետությունն օգտագործելու է իր ամբողջ ներուժը վերոնշյալ նպատակներին հասնելու համար՝ առաջնորդվելով պետական շահերով և հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության հրամայականով: |

**2.3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (ԲԳԿ) ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝**

Ըստ Պետական կառավարման համակարգի մարմինների մասին օրենք (2018 թվականի մարտի 23), Հոդված 3, մաս 1-ին՝
Նախարարությունը մշակում և իրականացնում է իրեն վերապահված գործունեության ոլորտում Կառավարության քաղաքականությունը:

| 2.4 ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ |
|---|
| Ծրագրի թիրախային շահառուներն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները:<br><br>Ծառայության տեսակը՝ ՀՀ արտաքին քաղաքականության մշակում և իրականացում: |

**2.5 ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝**

| Ծրագրի միջոցառման դասիչը | Ծրագրի միջոցառման անվանումը | Ծրագրի միջոցառման նկարագրությունը | Ծրագրի միջոցառման հիմնական շահառուները և փոխհատուցման շրջանակը |
|---|---|---|---|
| 11001 | Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործման ապահովում | ՀՀ Կառավարության ծրագրի հիման վրա արտաքին գործերի բնագավառում քաղաքականության մշակում և իրականացում, դիվանագիտական ծառայության կազմակերպում և ղեկավարում, հյուպատոսական ծառայությունների մատուցում | - ՀՀ քաղաքացիներ |
| 11002 | ՀՀ մուտքի վիզաների, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացում | Հայաստանում և արտերկրում հյուպատոսական ծառայությունների մատուցման տեխնիկական ապահովման նպատակով հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ | - ՀՀ քաղաքացիներ<br>- օտարերկրյա քաղաքացիներ |
| 11008 | «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորում | Հայաստանում կայանալիք «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի նախապատրաստման և | - ՀՀ քաղաքացիներ<br>- օտարերկրյա քաղաքացիներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | անցկացման հետ կապված միջոցառումների իրականացման ապահովում | |
| 31001 | Արտաքին գործերի նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում | Արտաքին գործերի նախարարության աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերում | - ՀՀ քաղաքացիներ |
| 31002 | Արտաքին գործերի նախարարության տրանսպորտային միջոցների բարելավում | Աշխատանքները պատշաճ որակով կազմակերպելու նպատակով ավտոմեքենայի ձեռքբերում | - ՀՀ քաղաքացիներ<br>- օտարերկրյա քաղաքացիներ |
| 2.6 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ | | | |
| Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | |
| Կառավարու-թյան արտա-քին քաղա-քականության մշակում և իրագործման ապահովում | Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործում:<br><br>Միջազգային հարաբերություններում ՀՀ շահերի և իրավունքների ներկայացում, պաշտպանություն: | ՀՀ երկկողմ և բազմակողմ կապերի շրջանակը, ծավալն ու խորությունը: | ՀՀ Սահմանադ-րություն, Հոդված 13, Հոդված 146<br><br>ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենք<br><br>ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր |
| ՀՀ մուտքի արտոնագրերի, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպա-գրության աշխա-տանքների իրականցում | Հյուպատոսական գործունեության իրականացում: | Ձևաթղթերի միավորի տպագրական ծախսերի ծավալը: | ՀՀ հյուպատոսական ծառայության մասին օրենք<br><br>ՀՀ ԱԳՆ կանոնադրություն, 11-րդ կետ, 15-րդ ենթակետ |
| Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | |
| «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորում | «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» հինգերրոդ Գլոբալ ֆորումին մասնակցող հրավիրված հյուրերի քանակը | - | ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի 1.1 կետ և ՀՀ կառավարության գործունեության 2021-2026թթ միջոցառումների 3.1 կետ |

| | | | |
|---|---|---|---|
| Արտաքին գործերի նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում | Աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռք բերում | - | ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի 6.7 բաժին |
| Արտաքին գործերի նախարարության տրանսպորտային միջոցների բարելավում | Աշխատանքները պատշաճ որակով կազմակերպելու նպատակով ավտոմեքենայի ձեռքբերում | - | ՀՀ կառավարության 17.02.2005թ. N 194-Ն որոշում |
| **2.7 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ (ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ)** | | | |
| Ծրագրի իրականացնողներն են՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, պաշտպանված ձևաթղթեր տպագրելու իրավասություն ունեցող համապատասխան ընկերություն՝ «ԷՅ ԷՄ ՓԻ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ: | | | |

## 3. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

| **3.1 ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝** | | |
|---|---|---|
| **Վերջնական արդյունքի չափորոշիչը** | **Չափման միավորը** | **Հղումներ չափորոշիչը նկարագրող մանրամասն աղյուսակին** |
| Գործընկեր պետությունների հետ հարաբերությունների շարունակական զարգացում և ամրապնդում, տոկոս | տոկոս | **Աղյուսակ 1** |
| **3.2 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝** | | |

| Միջոցառման դասիչը | Միջոցառման անվանումը | Միջոցառման արդյունքի չափորոշիչը | Չափման միավորը | Հղումներ չափորոշիչը նկարագրող մանրամասն աղյուսակին |
|---|---|---|---|---|
| 11001 | Կառավարության արտաքին քաղաքականու-թյան մշակում և իրագործման ապահովում | ՀՀ միջազգային երկկողմ հարաբերություններ. դիվանագիտական և հյուպատոսական հարաբերություններ ի իրականացում. ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների ընդհանուր քանակ | հատ | Աղյուսակ 2 |
| | | ՀՀ միջազգային բազմակողմ հարաբերություններ. միջազգային կազմակերպություններ րի հետ պաշտոնական հարաբերություններ ի իրականացում. միջազգային կազմակերպություններ րի ընդհանուր քանակ, որոնց ՀՀ-ը անդամակցում է կամ այլ կարգավիճակով նրանց հետ փոխգործակցում է | հատ | Աղյուսակ 3 |
| | | Գործընկեր պետությունների հետ | հատ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | բարիդրացիական հարաբերությունների խորացմանը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված հանդիպումների, փոխայցելությունների քանակ | | |
| | | Արտաքին քաղաքականության ոլորտի սեմինարների և հանդիպումների, ինչպես նաև միջազգային խորհրդակցությունների, գիտաժողովների ու այլ հավաքների աշխատանքների կազմակերպում և դրանց ՀՀ մասնակցության ապահովում, միջոցառումների ընդհանուր քանակ | հատ | |
| | | Արտաքին քաղաքական սպառնալիքների վերլուծություն և ռիսկերի գնահատում, համապատասխան քաղաքական ամփոփագրերի մշակում, ընդհանուր փաստաթղթերի քանակ | հատ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ՀՀ միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգերի իրականացում. ստորագրման ներկայացված միջազգային պայմանագրերի քանակ | հատ | |
| | | Վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրերի քանակ | հատ | |
| | | ԱԳՆ կենտ. ապարատի և արտերկրում ՀՀ դիվ. ծառ. մարմինների գործունեության լուսաբանում, ՀՀ արտ. քաղաքակ. հիմնադրույթները հասկանալի և ընկալելի դարձնելու ուղղությամբ գործողություններ՝ ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, մամուլի հաղորդ.-ներ և այլն | հատ | |
| | | Միջազգային հարթակում Հայաստանի դրական կերպարի ձևավորում, Հայաստանի և երկրում ընթացող գործընթացների վերաբերյալ | հատ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | միջազգային իրազեկվածության բարձրացում. Հայաստանի վերաբերյալ հրապարակումների թիվ | | |
| | | Հայաստանում օտարերկրյա լրագրողների գործունեության համակարգում, Հայաստանի վերաբերյալ օտարերկրյա մամուլում նախագծերի նախաձեռնում և/կամ դրանց իրականացմանն աջակցություն | հատ | |
| | | ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպություններ երի քանակ, որոնց ՀՀ-ը անդամակցում է կամ այլ կարգավիճակով փոխգործակցում | հատ | |
| | | Հյուպատոսական գործունեություն ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի | անձինք | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պաշտպանության իրականացում | | |
| | | Հանրային ծառայողներ և քաղաքացիական աշխատանք կատարողներ՝ կին/տղամարդ հարաբերակցություն | տոկոս | |
| | | Հանրային ծառայողներ և քաղաքացիական աշխատանք կատարողներ ղեկավար կին/տղամարդ հարաբերակցություն | տոկոս | |
| | | Գենդերային հավասարությանը, կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը և նրանց իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային կոնվենցիաների և պարտավորություննների կատարմանը ուղղված նախաձեռնություններ, հատ | անձ | |
| | | ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելու նպատակով համապատասխան գործողությունների իրականացում | տոկոս | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Միջազգային հարթակներում ազգային զեկույցներ, նախաձեռնություննե ր և բանաձևերի ներկայացման ձևաչափով ՀՀ ներգրավվածության ապահովում | տոկոս | |
| | | Սփյուռքի համայնքային և այլ կազմակերպություններ երի հետ փոխգործակցության ապահովում | տոկոս | |
| | | ԲԳԿ-ի գծով հաստատված բյուջեի նկատմամբ կատարման նվազագույն տոկոս | տոկոս | |
| **11002** | ՀՀ մուտքի վիզաների, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքներ ի իրականացում | ՀՀ մուտքի վիզաների տպագրություն (մնացորդային քանակ 2023թ. տարեսկզբի դրությամբ՝ 144510) | հատ | Աղյուսակ 4 |
| | | ՀՀ վերադարձի վկայականների տպագրություն (մնացորդային քանակ 2023թ. տարեսկզբի դրությամբ՝ 55350) | հատ | Աղյուսակ 5 |
| | | Պաշտպանված ձևաթղթերի տպագրություն (մնացորդային քանակ 2023թ. | հատ | Աղյուսակ 6 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տարեսկզբի դրությամբ՝ 71250) | | |
| **11008** | Հայաստանում կայանալիք «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի նախապատրաստման և անցկացման հետ կապված միջոցառումների իրականացման ապահովում | | | |
| **31001** | Արտաքին գործերի նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում | | | |
| **31002** | Արտաքին գործերի նախարարության տրանսպորտայ | Ավտոմեքենայի ձեռքբերում | հատ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ին միջոցների բարելավում | | | |

## 4. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### 4.1 Աղյուսակ 1

| | |
|---|---|
| **Չափորոշիչի նկարագրությունը** | |
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | Գործընկեր պետությունների հետ հարաբերությունների շարունակական զարգացում և ամրապնդում |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | Գործընկեր պետությունների հետ հարաբերությունների ոլորտ |
| **Սահմանումը** | Գործընկեր պետությունների հետ հարաբերությունների զարգացվածության և կայունության մակարդակ |
| **Չափման միավորը** | Տոկոս |
| **Տեսակ/տիպը** | Ցուցանիշը որակական է,<br>Վերջնական արդյունքը՝ ՀՀ երկկողմ հարաբերությունների բարելավում, փոխշահավետ գործընկերության խորացում: |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | Կիրառելի չէ |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | ՀՀ կողմից դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին պայմանագրերի քանակի հաշվառում: |
| **Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները** | Տարեկան |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ ԱԳՆ |
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Լրացուցիչ ծախսեր չի պահանջում |
| **Այլ նշումներ** | |
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 60% |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 100% |
| **Թիրախային ցուցանիշը** | 100% |
| **Սահմանափակումները** | - |

| | |
|---|---|
| **Այլ** | - |

**4.2 Աղյուսակ 2**

| **Չափորոշիչի նկարագրությունը** | |
|---|---|
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | ՀՀ միջազգային երկկողմ հարաբերությունների ընդլայնում. ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների քանակ |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | Երկկողմ հարաբերություններ |
| **Սահմանումը** | Օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների հետ հաստատված դիվանագիտական հարաբերությունների քանակ |
| **Չափման միավորը** | Հատ, ներկայացված է կուտակային կտրվածքով |
| **Տեսակ/տիպը** | Ցուցանիշը քանակական է, վերջնական արդյունք՝ ՀՀ միջազգային երկկողմ հարաբերությունների զարգացում և ընդլայնում: |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | Օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների քանակ, որոնց հետ ՀՀ հաստատել է դիվանագիտական հարաբերություններ: |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | ՀՀ կողմից դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին պայմանագրերի քանակի հաշվառում |
| **Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները** | Տարեկան |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ ԱԳՆ |
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Լրացուցիչ ծախսեր չի պահանջում |
| **Այլ նշումներ** | |
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 2023թ. տվյալներով ՀՀ-ն դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 179 պետության հետ: |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 179 |

| | |
|---|---|
| **Թիրախային ցուցանիշը** | 179 |
| **Սահմանափակումները** | - |
| **Այլ** | - |

**4.3 Աղյուսակ 3**

| **Չափորոշիչի նկարագրությունը** | |
|---|---|
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | ՀՀ միջազգային բազմակողմ հարաբերությունների ընդլայնում |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | Միջազգային կառույցներ |
| **Սահմանումը** | Միջազգային կազմակերպությունների քանակը, որոնց ՀՀ-ն անդամակցում է կամ որոնց հետ այլ կարգավիճակով փոխգործակցում է: |
| **Չափման միավորը** | Հատ, չափորոշիչը ներկայացված է կուտակային կտրվածքով |
| **Տեսակ/տիպը** | Քանակական, միջազգային բազմակողմ հարաբերություններում ՀՀ-ի ներկայացվածության ապահովում |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | Միջազգային կազմակերպությունների քանակ, որոնց ՀՀ անդամակցում է |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վավերացրած պայմանագրեր: |
| **Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները** | Տվյալները հավաքագրվում/թարմացվում են տարեկան կտրվածքով: |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ ԱԳՆ |
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Լրացուցիչ ծախսեր չի պահանջում |
| **Այլ նշումներ** | |
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 115 |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 115 |
| **Թիրախային ցուցանիշը** | 115 |

| | |
|---|---|
| **Սահմանափակումները** | - |
| **Այլ** | - |

### 4.4 Աղյուսակ 4

| **Չափորոշիչի նկարագրությունը** | |
|---|---|
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | ՀՀ մուտքի վիզաների տպագրություն |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | Վիզայի պիտակներն օգտագործվում են ՀՀ սահմանին՝ ՀՀ ոստիկանության կողմից և օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից՝ օտարերկրյա քաղաքացիներին ՀՀ մուտքի վիզա տալու նպատակով |
| **Սահմանումը** | Մուտքի վիզաների տարեկան պահանջարկը որոշվում (կանախատեսվում) է հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի օգտագործված քանակը և հաշվի առնելով հաջորդ տարիներին արդեն հայտնի կամ ծրագրված վիզային ռեժիմների հնարավոր փոփոխությունները, որոնք կարող են ազդել մուտքի վիզաների պահանջարկի վրա: |
| **Չափման միավորը** | հատ |
| **Տեսակ/տիպը** | Քանակ, վիզաների տրամադրում դիմողներին |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | Ցուցանիշը ամփոփվում է ըստ հիմնական երկու բաղադրիչների. ՀՀ ոստիկանության կողմից և օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրված ՀՀ մուտքի արտոնագրեր: Բացի այդ ցուցանիշը վերլուծվում է ըստ տրամադրված մուտքի վիզաների ժամկետի՝ մինչեւ 21 օր ժամկետով գտնվելու իրավունքով և մինչեւ 120 օր ժամկետով գտնվելու իրավունքով: |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | Տրամադրված մուտքի վիզաների վերաբերյալ վիճակագրական տվյալները ստացվում են «Բայազետ» էլեկտրոնային համակարգի միջոցով, որտեղ հնարավոր է ֆիլտրների կիրառումը և անհրաժեշտ բովանդակությամբ հաշվետվությունների ստացումը: Վիզաների մասին տվյալները գրանցվում է վիզաների էլեկտրոնային համակարգում և հյուպատոսական գործունեություն ծավալող մարմինների հաշվետվություններում: |
| **Տվյալների հավաքագրման** | Անհրաժեշտ տվյալները կարող են ստացվել ցանկացած ժամանակ՝ ըստ պահանջի, իսկ կանոնավոր կերպով |

| | |
|---|---|
| **հաճախականությունը կամ ժամկետները** | ամփոփվում են տարեկան, իսկ անհաժեշտության դեպքում նաև եռամսյակային և կիսամյակային կտրվածով: |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ արտաքին գործերի նախարարություն |
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Տվյալները ստանալու համար ծախս չի կատարվում |
| **Այլ նշումներ** | |
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 40000 |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 53000 |
| **Թիրախային ցուցանիշը** | 0 |
| **Սահմանափակումները** | |
| **Այլ** | Ցուցանիշը կարող է փոփոխվել, եթե հաջորդ տարիների ընթացքում քաղաքական որոշումների արդյունքում տեղի ունենան այնպիսի վիզային ռեժիմների փոփոխություններ, որոնք էապես կազդեն տրամադրվող մուտքի վիզաների քանակի վրա: Օրինակ, դեպի Հայաստան այցելուների մեծ հոսք ունեցող օտարերկրյա պետության հետ առանց վիզային ռեժիմ սահմանելը:<br>2022թ. ընթացքում տրամադրված ՀՀ մուտքի վիզաների թվաքանակը կազմել է 8,250, իսկ 2021թ.՝ 14,250 հատ:<br>2022թ. ցուցանիշը 2021թ.-ից պակաս է 43%-ով, որը պայմանավորված է նրանով, որ ՀՀ մուտքի վիզաները տրամադրվում են E-visa էլեկտրոնային համակարգի միջոցով: |

### 4.5 Աղյուսակ 5

| | |
|---|---|
| **Չափորոշիչի նկարագրությունը** | |
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | ՀՀ վերադարձի վկայականների տպագրություն |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | ՀՀ վերադարձի վկայականները ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից տրամադրվում են ՀՀ քաղաքացիներին՝ Հայաստան վերադառնալու նպատակով: |
| **Սահմանումը** | ՀՀ քաղաքացիներին տրամադրված վերադարձի վկայականների քանակ: ՀՀ վերադարձի վկայականների տարեկան պահանջարկը որոշվում (կանխատեսվում) է հիմք |

| | |
|---|---|
| | ընդունելով նախորդ տարիների փաստացի օգտագործված քանակը: |
| **Չափման միավորը** | հատ |
| **Տեսակ/տիպը** | Քանակ, վերադարձի վկաըականների տրամադրում ՀՀ քաղաքացիներին |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | Ցուցանիշը ամփոփվում է ըստ հիմնական երկու բաղադրիչների. վճարովի և անվճար տրամադրված ՀՀ վերադարձի վկայականների |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | Տրամադրված ՀՀ վերադարձի վկայականների վիճակագրական տվյալները ստացվում և ամփոփվում են ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից ՀՀ ԱԳՆ ներկայացվող հաշվետվությունների միջոցով: Բացի այդ ամփոփ տվյալներ հնարավոր է ստանալ խիստ հաշվառման փաստաթղթերի վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների, ինչպես նաև էլեկտրոնային հյուպատոսություն համակարգի միջոցով: |
| **Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները** | Եռամսյակային և տարեկան |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ արտաքին գործերի նախարարություն |
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Տվյալները ստանալու համար ծախս չի կատարվում |
| **Այլ նշումներ** | |
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 30000 |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 45500 |
| **Թիրախային ցուցանիշը** | 2023թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱԳՆ պահեստում առկա է 55,350 հատ վերադարձի վկայական: 2023թ.-ին նախատեսվում է տպագրել 45,500 հատ վերադրաձի վկայական: 2024թ. 3-րդ եռամսյակում անհրաժեշտ կլինի տպագրել **45,500** հատ, որը կապահովի պահեստում անհրաժեշտ խմբաքանակը: |
| **Սահմանափակումները** | |

| | |
|---|---|
| Այլ | ՀՀ վերադարձի վկայականի սպառումը 2022թ. կազմել է 7150 հատ, իսկ 2021թ. սպառվել է 23,500 հատ: 2022թ. ցուցանիշը 2021թ.-ից պակաս է 70%-ով, որը պայմանավորված է նրանով, որ 2022թ. պահանջարկը եղել է ավելի ցածր քան 2021թ.-ին, քանի որ ՀՀ վերադարձի վկայականը տրամադրվում է ՀՀ կառավարության 24.03.2011թ-ի. թիվ 297-Ն որոշման 2-րդ հավելվածի 1-ին կետին համապատասխան: |

### 4.6 Աղյուսակ 6

| **Չափորոշիչի նկարագրությունը** | |
|---|---|
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | Պաշտպանված ձևաթղթերի տպագրություն |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | Պաշտպանված ձևաթղթերն օգտագործվում են դիվանագիտական ծառայության մարմինների կողմից տրամադրվող տեղեկանքները ձևակերպելու համար |
| **Սահմանումը** | Պաշտպանված ձևաթղթերի տարեկան պահանջարկը որոշվում (կանխատեսվում) է հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի օգտագործված քանակը |
| **Չափման միավորը** | հատ |
| **Տեսակ/տիպը** | քանակ |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | Օգտագործված պաշտպանված ձևաթղթերի վիճակագրական տվյալները ստացվում և ամփոփվում են ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից ՀՀ ԱԳՆ ներկայացվող հաշվետվությունների միջոցով: Բացի այդ ամփոփ տվյալներ հնարավոր է ստանալ նաև խիստ հաշվառման փաստաթղթերի վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների միջոցով: |
| **Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները** | Եռամսյակային և տարեկան |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ արտաքին գործերի նախարարություն |
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Տվյալները ստանալու համար ծախս չի կատարվում |
| **Այլ նշումներ** | |

| | |
|---|---|
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 51000 |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 28740 |
| **Թիրախային ցուցանիշը** | 2022թ. ցուցանիշը 2021թ.-ից պակաս է 52%-ով: 2024թ. 3-րդ եռամսյակում անհրաժեշտ կլինի տպագրել **28,740** հատ, որը կապահովի պահեստում անհրաժեշտ խմբաքանակը: |
| **Սահմանափակումները** | |
| **Այլ** | Պաշտպանված ձևաթղթերի սպառումը նախատեսված է տարեկան շուրջ 25,000-41,000 հատ, սակայն 2022թ.-ին օգտագործվել է 19,800 հատ, իսկ 2021թ.-ին՝ 41,090 հատ: |

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԻ**

## 5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

| 5.1 ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ |
|---|
| Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել աշխարհի 179 երկրի հետ (2023թ.), անդամակցում է 110 միջազգային կազմակերպության, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի, կոնվենցիաների և միջազգային հանրության կողմից ընկալվում է որպես կանխատեսելի ու հուսալի գործընկեր:<br><br>Ծրագիրն ուղղված է տարածաշրջանային խաղաղության և կայունության հաստատմանը, գործընկերների հետ համագործակցության խթանմանը և հարաբերությունների կարգավորմանը, ԼՂ հիմնահարցի խաղաղ և համապարփակ կարգավորմանը: |

**5.2 ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՝**

| Վերջնական արդյունքի չափորոշիչը | Ցուցանիշը | Ժամկետը |
|---|---|---|
| Գործընկեր պետությունների հետ հարաբերությունների շարունակական զարգացում և ամրապնդում, տոկոս | 100 % | 2026 |

**5.3 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝**

| Միջոցառման դասիչը | Միջոցառման անվանումը | Արդյունքի չափորոշիչը | ՖՏ-2 | ՖՏ-1 | ՖՏ | Ֆ+1 | ՖՏ+2 |
|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 11001 | Կառավարու-թյան արտաքին քաղաքակա-նության մշակում և իրագործման ապահովում | ՀՀ միջազգային երկկողմ հարաբերություններ. դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների իրականացում. ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների ընդհանուր քանակ, հատ | 179 | 179 | 179 | 179 | 179 |
| | | ՀՀ միջազգային բազմակողմ հարաբերություններ. միջազգային կազմակերպությունների հետ պաշտոնական հարաբերությունների իրականացում. միջազգային կազմակերպությունների ընդհանուր քանակ, որոնց ՀՀ-ը անդամակցում է | 115 | 115 | 115 | 115 | 115 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կամ այլ կարգավիճակով նրանց հետ փոխգործակցում է, հատ | | | | | |
| | | Գործընկեր պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների խորացմանը, բոլոր պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված հանդիպումների, փոխայցելությունների քանակ | 855 | 570 | 570 | 570 | 570 |
| | | Արտաքին քաղաքականության ոլորտի սեմինարների և հանդիպումների, ինչպես նաև միջազգային խորհրդակցությունների, գիտաժողովների ու այլ հավաքների աշխատանքների կազմակերպում և դրանց ՀՀ մասնակցության ապահովում, | 1287 | 930 | 930 | 930 | 930 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | միջոցառումների ընդհանուր քանակ | | | | | |
| | | Արտաքին քաղաքական սպառնալիքների վերլուծություն և ռիսկերի գնահատում, համապատասխան քաղաքական ամփոփագրերի մշակում, ընդհանուր փաստաթղթերի քանակ | 1431 | 901 | | | |
| | | ՀՀ միջազգային պայմանագրերի կնքման ընթացակարգերի իրականացում. ստորագրման ներկայացված միջազգային պայմանագրերի քանակ | 133 | 70 | 70 | 70 | 70 |
| | | Վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրերի քանակ | 83 | 70 | 70 | 70 | 70 |
| | | ԱԳՆ կենտ. ապարատի և արտերկրում ՀՀ դիվ. ծառ. մարմինների գործունեության լուսաբանում, ՀՀ արտ. քաղաքակ. հիմնադրույթներ | 1702 | 998 | 998 | 998 | 998 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ը հասկանալի և ընկալելի դարձնելու ուղղությամբ գործողություննե ր՝ ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ , մամուլի հաղորդ.-ներ և այլն, հատ | | | | | |
| | | Միջազգային հարթակում Հայաստանի դրական կերպարի ձևավորում, Հայաստանի և երկրում ընթացող գործընթացների վերաբերյալ միջազգային իրազեկվածությ ան բարձրացում. Հայաստանի վերաբերյալ հրապարակումն երի թիվ, հատ | 889 | 497 | 497 | 497 | 497 |
| | | Հայաստանում օտարերկրյա լրագրողների գործունեության համակարգում, Հայաստանի վերաբերյալ օտարերկրյա մամուլում նախագծերի նախաձեռնում և/կամ դրանց իրականացմանն | 329 | 202 | 202 | 202 | 202 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | աջակցություն, հատ | | | | | |
| | | ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած օտարերկրյա պետությունների ու միջազգային կազմակերպությունների քանակ, որոնց ՀՀ-ը անդամակցում է կամ այլ կարգավիճակով փոխգործակցում, հատ | 294 | 294 | | | |
| | | Հյուպատոսական գործունեություն ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության իրականացում, հատ | 25716 | 65000 | 65000 | 65000 | 65000 |
| | | Օտարերկրյա պետություններում թրաֆիքինգի ենթարկված ՀՀ քաղաքացիների վերադարձ ՀՀ, անձ | 3 | 0 | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հանրային ծառայողներ և քաղաքացիական աշխատանք կատարողներ՝ կին/տղամարդ հարաբերակցություն, տոկոս | 61.2/38.8 | | | | |
| | | Հանրային ծառայողներ և քաղաքացիական աշխատանք կատարողներ (ղեկավար)՝ կին/տղամարդ հարաբերակցություն, տոկոս | 42.5/57.5 | | | | |
| | | Գենդերայի հավասարության, կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը և նրանց իրավունքների պաշտպանությանն առնչվող միջազգային կոնվենցիաների և պարտավորությունների կատարմանը ուղղված նախաձեռնություններ, հատ | 3 | 0 | | | |
| | | ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացն | 100 | 100 | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | առաջ մղելու նպատակով համապատասխան գործողությունների իրականացում | | | | | |
| | | Միջազգային հարթակներում ազգային զեկույցներ, նախաձեռնություններ և բանաձևերի ներկայացման ձևաչափով ՀՀ ներգրավվածության ապահովում | 100 | 100 | | | |
| | | Սփյուռքի համայնքային և այլ կազմակերպությունների հետ փոխգործակցության ապահովում | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| | | ԲԳԿ-ի գծով հաստատված բյուջեի նկատմամբ կատարման նվզագույն տոկա | 98.1 | 95 | 95 | 95 | 95 |
| 11002 | ՀՀ մուտքի վիզաների, վերադարձի վկայականների և պաշտպանված | ՀՀ մուտքի վիզաների տպագրություն | 40000 | 53000 | 0 | 50000 | 50000 |
| | | ՀՀ վերադարձի վկայականների տպագրություն | 30000 | 45500 | 45500 | 30000 | 30000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ձևաթղթերի տպագրությ ան աշխատանք ների իրականացու մ | Պաշտպանված ձևաթղթերի տպագրություն | 51000 | 28740 | 28740 | 37750 | 37750 |

**5.4 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ (հազ.դրամ)՝**

| Միջոցառման դասիչը | Միջոցառման անվանումը | ՖՏ-2 | ՖՏ-1 | ՖՏ | Ֆ+1 | ՖՏ+2 |
|---|---|---|---|---|---|---|
| 11001 | Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործման ապահովում | 2376955.69 | 2165751.8 | 2230813.09 | 2212437.68 | 2270483.54 |
| 11002 | ՀՀ մուտքի վիզաների, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացում | 22749.99 | 22750.0 | 8705.5 | 22750.0 | 22750.0 |
| 11008 | «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորում | 87305.48 | | 100000.0 | | 100000.0 |
| 31001 | Արտաքին գործերի նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում | 43574.87 | 38900.0 | 147831.0 | 83900.0 | 73600.0 |
| 31002 | Արտաքին գործերի նախարարության տրանսպորտային միջոցների բարելավում | | | | 43945.0 | 49852.5 |
| ***Ընդամենը ծրագիր*** | | 2530586.03 | 2227402.25 | 2487349.60 | 2363032.67 | 2516686.04 |

**5.5 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (հազ.դրամ)՝**

| Ֆինանսավորման աղբյուրներ | ՖՏ-2 | ՖՏ-1 | ՖՏ | Ֆ+1 | ՖՏ+2 |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՀՀ պետական բյուջե | 2530586.03 | 2227402.25 | 2487349.60 | 2363032.67 | 2516686.04 |
| Արտաբյուջետային ֆոնդեր | | | | | |
| Այլ | | | | | |
| **Արտաքին աղբյուրներ, որից** | | | | | |
| Նվիրատու կազմակերպություններ | | | | | |
| Այլ | | | | | |
| ՀՀ պետական բյուջե | | | | | |
| Արտաբյուջետային ֆոնդեր | | | | | |
| **Ընդամենը բոլոր աղբյուրների գծով** | 2530586.03 | 2227402.25 | 2487349.60 | 2363032.67 | 2516686.04 |
| **5.6 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝** | | | | | |
| | | | | | |